Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2022 թվականի դեկտեմբերի 1-ին գումարվել է ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի «1146. Հանրակրթության ծրագրի» շրջանակում 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների դասագրքերի ստեղծման համար դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի երկրորդ նիստը:

Օրակարգում՝

1. Դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության և հրավերի տեքստերում ժամանակացույցի փոփոխության հարցի քննարկում:
2. Դրամաշնորհի հատկացման մրցույթի հայտարարության և հրավերի փոփոխված տեքստերի հրապարակում:
3. Դրամաշնորհային մրցութային հանձնաժողովի հաջորդ նիստի ժամանակացույցի սահմանում:

Արտահայտվեցին՝

Հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները, ովքեր քննարկեցին դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության և հրավերի տեքստերում ժամանակացույցի փոփոխման հարցը: Առաջարկվեց «հունվարի 5-ը» փոխել «մարտի 31»-ով:

Հիմք ընդունելով ՀՀ ՖՆ-ի կողմից ՀՀ կառավարության N 1937-Ն /24.12.2003թ./որոշման մեջ կատարված լրացումները, ելնելով վերոնշյալ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի» 23-րդ կետի պահանջներից՝

Որոշվեց.

1. Հաստատել դրամաշնորհային մրցույթի մասին հայտարարության և հրավերի տեքստերի ժամանակացույցի փոփոխությունը:

2.Իրազեկել հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ դրամաշնորհի հատկացման մրցույթի հայտարարությունը տեղադրել Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

3. Հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության:

Հանձնաժողովի նախագահ՝ Ժաննա Անդրեասյան

Հանձնաժողովի քարտողար՝ Նվարդ Բարոյան